

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/7

26 հունիսի 2012թ.

Քննարկվեց «Շեն Մառնիկ» ՍՊԸ 31.05.2012թ-ի դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 17.05.2012թ. թիվ 1001951 ստուգման ակտի դեմ:

«ԿԱ ՊԵԿ» հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Շեն Մառնիկ» ՍՊԸ ներկայացուցիչների և ստուգման իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ» Քննչական վարչությունում 22.12.2011թ-ից նյութեր են նախապատրաստվում «Շեն Մառնիկ» ՍՊԸ (այսուհետ նաև Ընկերություն) վերաբերյալ: Նյութերի նախապատրաստման ընթացքում Ընկերությունում նշանակվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Մասնավորապես, համաձայն «ԿԱ ՊԵԿ» նախագահի ժ/պ 13.01.2012թ. թիվ 1001951 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Շեն Մառնիկ» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 17.05.2012թ-ին կազմվել է թիվ 1001951 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 10.546.802 դրամ, որից հարկի գումարը կազմում է 4.911.200 դրամ: Ստուգման ակտի ճշտությունը և Ընկերության հարկային պարտավորությունների վերջնական չափը որոշելու նպատակով նշանակվել է դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «ԳԱԱ <Փորձաքննությունների ազգային բյուրո>» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե. «ա» անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:


Հաշվի առնելով, որ «Շեն Մառնիկ» ՍՊԸ գործով «ԿԱ ՊԵԿ» Քննչական վարչությունում նյութեր են նախապատրաստվում քրեական գործի հարուցման անհրաժեշտությունը պարզելու նպատակով, Հանձնաժողովը գտնում է, որ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության գանգատի հիման վրա «ԿԱ» պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «Օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի դրույթներով՝ «Շեն Մառնիկ» ՍՊԸ 31.05.2012թ-ի դիմում-բողոքի հիման վրա «ԿԱ» պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:



Handwritten signature of S. PARSYAN.

S.ՔԱՐՍՅԱՆ